ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի
ինստիտուտի տնօրեն, իրավ. գիտ. թեկնածու
Լ.Ա. Ղազանչյան
20ը մարտի, 2020թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔԸ

Լիլիթ Վահեի Մելիքսեթյանի «Հանրաքվեի որպես անմիջական ժողովրդավարության ինստիտուտի բարելավման արդի հիմնահարցերը» թեմայով ԺԲ.00.02 – «Հանրային իրավունք՝ սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող ատենախոսության վերաբերյալ

Գրախոսվող թեկնածուական ատենախոսությունը նվիրված է սահմանադրական փոփոխությունների համատեքստում հանրաքվեի՝ որպես անմիջական ժողովրդաիշխանության սահմանադրաիրավական ինստիտուտի ուսումնասիրությանը, վերջինիս օրենսդրական ամրագրման ու զարգացման փուլերի հիմնահարցերին, ինչպես նաև տեղական հանրաքվեի սահմանադրական և օրենսդրական կարգավորման էվոլյուցիայի վերլուծությանը և հանրաքվեի ժողովրդավարական կայացման հիմնահարցերին:

Հայցորդի ատենախոսության ուսումնասիրության առարկան են հանրաքվեի՝ որպես սոցիալիրավական ինստիտուտի առաջացման, որպես սահմանադրաիրավական ինստիտուտի ձևավորման իրավական նախադրյալների պատմության, այդ գործընթացներին բնորոշ օրինաչափությունները, ինչպես նաև ՀՀ-ում հանրաքվեի՝ որպես սահմանադրաիրավական ինստիտուտի ամրագրման, օրենսդրական հարթությամբ իրացման արդի վիճակը:

Ընտրված հետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ նախ, ներկայումս հասարակության մեջ նկատվում է անմիջական ժողովր-դավարության ձևերի, ներառյալ հանրաքվեի սահմանադրական ամրագրման շրջանակների ընդլայնում, կիրառման ինտենսիվության աճ, դրա բովանդակության էա-

կան ժողովրդավարացում: Ընդհանրաապես, անմիջական ժողովրդաիշխանության պակասը ծնում է պետական իշխանության անվերահսկելիության ու անպատասխանատվության կայուն ու պայթունավտանգ մթնոլորտ, որի հաղթահարման հիմնական միջոցներն են ժողովրդի՝ որպես պետականության կրողի կոչումն իրական դարձնելը, ժողովրդաիշխանության անմիջական ու ներկայացուցչական ձևերի ներդաշնակ հավասարակաշռության հաստատումը: Այսպիսի մոտեցումը պայմանավորում է հանրաքվեի հետ կապված հասարակական հարաբերությունները կարգավորող նորմերի ոչ միայն ձևական-նորմատիվ, այլև խորքային պատմաիրավական, քաղաքական-իրավական ա-նաչառ վերլուծության ենթարկելու անհրաժեշտությունը: Հեղինակը հանրաքվեն դի-տարկել է ոչ թե որպես նոր դարաշրջանի իրավական ինստիտուտ, այլ մարդկության պատմության ընթացքում միշտ նրան ուղեկցող և բնորոշ երևույթ:

Թեմայի արդիականության մասին են վկայում նաև հանրության կառավարմանը բնորոշ օրինաչափություններից մեկի՝ թվայնացման ու էլեկտրոնայնացման միտումները, առաջ են գալիս էլեկտրոնային կառավարման նոր հայեցակարգեր, ինչը մի կողմից նպաստում է անմիջական ժողովրդաիշխանությանը, մյուս կողմից՝ նվազեցնում է հանրային իշխանություն և անհատ «կենդանի» կապը, ինչը հաճախ սոցիալ-հոգեբանական բացասական դրսևորումներ է ունենում: Այս համատեքստում առավելապես հետաքրքրողը նոր իրավական երևույթի՝ էլեկտրոնային քվեարկության և էլեկտրոնային հանրաքվեի սաղմերն են: Այս նորույթը պահանջում է անմիջական ժողովրդաիշխանության վերաիմաստավորում՝ ձևավորված քաղաքական-իրավական, սահմանադրական տեսությունների լույսի ներքո: Էլեկտրոնային քվեարկությունը նոր հորիզոններ է բացում հանրաքվեի կիրառման համար: Ընդ որում, հանրային նկատելի պահանջարկի առկայության պայմաններում, այս նոր էական իրողությունների համատեքստում անմիջական ժողովրդաիշխանության հիմնահարցերը համալիր հետազոտության նյութ դեռևս չեն դարձել:

Հանրաքվեի ինստիտուտի իդեալական մոդելին բնորոշ էական չափանիշները դիտարկվել են, որպես հիմք՝ ՀՀ-ում հանրաքվեի ինստիտուտը գնահատելու, դրա կատարելագործման առաջարկություններ մշակելու համար:

Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել սահմանադրական իրավունքի, հանրային կառավարման, իրավունքի պատմության դասընթացներում և այդ հարցադրումներին առնչվող գիտական հետազոտություններում: Դրանք կարող են նպաստել նաև հանրաքվեի իրավական ինստիտուտին ուղղված իրավաստեղծ աշխատանքին, դրա իրավական կարգավորման հետագա կատարելագործմանը:

Ատենախոսությունում հեղինակը առանձնացրել է այն իրավական նորամուծությունները, որոնք, ըստ հեղինակի, կարող են նախադրյալ հանդիսանալ հետագա բարեփոխումների համար:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, չորս գլխից, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների ցանկից: Ընդ որում, կառուցվածքում ներառված հարցադրումների հիմնավորված ընտրությունը հնարավորություն է տվել ապահովելու պատշաճ համալիր հետազոտություն:

Հեղինակը ուսումնասիրել է հանրաքվեին վերաբերող հայրենական օրենսդրությունը (այդ թվում՝ նախկինում գործած), այլ պետությունների սահմանադրությունները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների խորհրդատվական որոշումները, բանաձևերը, սահմանադրական դատարանի որոշումները և այլն:

Այսպիսով, ընտրված թեմայի արդիականությունը, հետազոտության օբյեկտի և առարկայի ճշտությունը, նպատակները, տեսական և գործնական խնդիրներին առաջարկվող լուծումները, ինչպես նաև հետազոտության տեսական և կիրառական նշանակությունը կասկած չեն հարուցում:

Հետազոտության գիտական նորույթը պայմանավորված է նրանով, որ առաջին անգամ հանրաքվեն դիտարկվել ոչ թե որպես սոսկ նոր դարաշրջանի իրավական ինստիտուտ, այլև մարդկության պատմության ընթացքում միշտ նրան ուղեկցող և բնորոշ երևույթ, առանձնացվել են Հայաստանի Հանրապետությունում հանրաքվեի ինստիտուտի իրավական պատմության գիտական չափանիշների վրա կառուցված փուլերը և կանխորոշվել են դրանց բնորոշ գծերը, ուսումնասիրվել է հանրաքվեի իրավական ինստիտուտի սահմանադրական իրավական պատմությունը՝ ըստ առանձնացված փուլային բաժանման:

Գիտական նորույթը պայմանավորված է նաև պաշտպանության ներկայացված դրույթներով: Դրանց մեծամասնությունը արժանի է առանձնակի ուշադրության, մասնավորապես՝ ներկայացվել են Շվեյցարիան, որպես հանրաքվեի հայրենիք համարելու իրավաքաղաքական նոր փաստարկները, որոնք գիտագործնական տեսանկյունից անհրաժեշտ են ընդհանրապես հանրաքվեի էությունը, կոնկրետ իրավիճակում ծագելու և տարածվածության աստիճանը համարժեք գնահատելու տեսանկյունից: Նաև հեղինակը առանձնացրել է էական չափանիշների շրջանակ, որի սահմաններում որոշակի ճշգրտությամբ կարելի է գնահատել հանրաքվեի ինստիտուտի արդյունավետության և գործունության մակարդակը Հայաստանի Հանրապետությունում:

Հետազոտության տեսական ու գործնական նշանակությունը պայմանավորված է այն հանգամանքով,որ աշխատանքում տեղ գտած եզրահանգումները կարող են նպաստել հետազոտության թեմայի վերաբերյալ տեսական պատկերացումների ընդլայնմանը ու հանդիսանալ գիտական աղբյուր՝ հետագա նմանատիպ աշխատանքների մշակման համար:

Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել սահմանադրական իրավունքի, հանրային կառավարման, իրավունքի պատմության դասընթացներում և այդ հարցադրումներին առնչվող գիտական հետազոտություններում: Դրանք կարող են նպաստել նաև հանրաքվեի իրավական ինստիտուտին ուղղված իրավաստեղծ աշխատանքին, դրա իրավական կարգավորման հետագա կատարելագործմանը:

Ատենախոսության կառուցվածքը թույլ է տալիս հեղինակին համակարգային, բազմակողմանի, ամբողջական և ճիշտ եղանակներով լուծել հետազոտության թեմայի վերաբերյալ առաջ քաշված խնդիրները: Աշխատանքը գրված է գրագետ, իրավաբանական լեզվով:

Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական դրույթները, իսկ ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից հաստատված գիտական հրատարակությունների համար ընդունելի պարբերականներում հեղինակի հրատարակած թվով վեց հոդվածները բավարար չափով արտացոլում են

ատենախոսության հիմնական արդյունքները:

Վերոնշվածի հետ մեկտեղ պետք է արձանագրել, որ աշխատանքում առկա են որոշակի նկատառումներ և դիտողություններ, որոնք հանգում են հետևյալին.

1. Իշխանության իրականացման եղանակների ու ձևերի մեջ ավանդաբար գիտությունն առանձնացնում է դրանց հիմնական ձևերը՝ անմիջական և միջնորդավորված, որոնք գտնվում են սերտ համակարգային կապերի մեջ: Համապատասխանաբար, տեսական հետազոտության ընթացքում անհրաժեշտություն է առաջանում քննարկել դրանք՝ միմյանց հետ փոխազդեցության համակարգային կապերի մեջ, ինչպես ձևավորման ու զարգացման պատմական գործընթացում, այպես էլ արդի ժամանակաշրջանում: Հանրային իշխանության գործառույթների կարգավորման արդի միտումները պահանջում են, որ այս երկու եղանակներն ուսումնասիրվեն համատեղ հարաբերակցության մեջ, այլ ոչ թե մեկուսի: Այս տեսանկանկյունից ցանկալի կլիներ, որ ատենախոսության հեղինկը կանգ առներ ժողովրդի իշխանության իրականացման երկու հիմնական ձևերի հարաբերակցության հիմնահարցերի հետազոտության վրա, այլ ոչ թե միայն հանրաքվեի: Այդպիսի համակարգային վերլուծությունը հնարավորություն կտար բացահայտելու յուրաքանչյուր ձևի առավելություններն ու հնարավոր թերությունները, կանխորոշելու դրանց բարելավման համալիր ուղիները:

2. Հեղինակը համակողմանի հետազոտության է ենթարկել հանրաքվեիի սահմանադրական ինստիտուտը Հայաստանի երրորդ հանրապետության հռչակման պահից մինչև մեր օրերը՝ սահմանադրական զարգացման փուլերին ու ընթացիկ օրենսդրության փոփոխություններին զուգահեռ: Միաժամանակ, աշխատանքում հեղինակը բավարար չափով չի անդրադարձել այլ երկրներում հանրաքվեի սահմանադրական կարգավորման բովանդակությանը: Ցանկալի կլիներ, որպեսզի նա առավել լայն շրջանակներով իրականացներ հետազոտություն նաև այդ ուղղությամբ,

կատարեր համեմատություններ այլ երկրների սահմանադրությունների, ինչպես նաև պրակտիկայի հետ: Խնդիրն այն է, որ այդ հարցում չի ձևավորվել միասնական պրակտիկա, չկան միասնական մոտեցումներ, որոնց բացատրությունը ևս գիտական անհրաժեշտ նախապայման է՝ հայրենական նույնաբնույթ զարգացումները համարժեք պարզելու ասպեկտով:

3. Աշխատանքի պաշտպանության ներկայացված դրույթներից 5-րդում նշվում է, որ. «Սահմանադրության 2015 թ. փոփոխությունները, նկատելի դրական առաջընթացի հետ մեկտեղ, համալիր լուծում չեն տվել հանրաքվեի ինստիտուտի կայացման խնդիրներին»: Այնուհետև հեղինակը թվարկում է իր կողմից այդպիսին ճանաչված խնդիրները: Գտնում ենք, որ պաշտպանության դրվող այդ դրույթն առավել արժեքավոր կլիներ, եթե հեղինակը մեջբերեր հանրաքվեի ինստիտուտի արդյունավետության իր կողմից առաջարկվող գնահատման համակարգը և ներկայացներ 2015 թ. կատարված սահմանադրական փոփոխությունների համատեքստում ներդրված հանրաքվեի ինստիտուտին տրված «գնահատականը» և իդեալական մոդելից դրա շեղման աստիճանը:

Ամփոփելով նկատառումները, հարկ է նշել, որ վերոնշված նկատառումներն ունեն մասնակի և խորհրդատվական բնույթ և բնավ չեն կարող ազդել Լիլիթ Վահեի Մելիքսեթյանի գիտական աշխատանքի ընդհանուր դրական արժանիքների վրա:

Ատենախոսությունը և սեղմագիրը պատրաստված են ներկայացվող պահանջներին համապատասխան, իսկ հեղինակի կողմից հրատարակված հոդվածներում լիարժեքորեն արտացոլվում են ատենախոսության հիմնական դրույթները:

Ատենախոսության թեման ու բովանդակությունը համապատասխանում են ընտրված մասնագիտությանը:

Այսպիսով, Լիլիթ Վահեի Մելիքսեթյանի «Հանրաքվեն որպես անմիջական ժողովրդավարության ինստիտուտի բարելավման արդի հիմնահարցերը» թեմայով

ատենախոսական հետազոտությունն իրենից ներկայացնում է արդիական, գիտական նորույթ պարունակող, տեսական և գործնական նշանակություն ունեցող ավարտուն, ինքնուրույն ուսումնասիրություն, որը ներառում է սահմանադրական իրավունքի տեսության, օրենսդրության, իրավակիրառման պրակտիկայի համար կարևոր նշանակություն ունեցող խնդիրների վերաբերյալ գիտականորեն հիմնավորված լուծումներ: Իսկ հետազոտության արդյունքները սահմանադրական իրավունքի գիտության ոլորտի համար ունեն մեծ նշանակություն:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Լիլիթ Վահեի Մելիքսեթյանի «Հանրաքվեն որպես անմիջական ժողովրդավարության ինստիտուտի բարելավման արդի հիմնահարցերը» վերտառությամբ ատենախոսությունը լիովին համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով սահմանված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է *ԺԲ.00.02 – Հանրային իրավունք՝ սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում* մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնի 2020 թվականի մարտի 17-ի նիստում, որին մասնակցել են բաժնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ.Մ. Սաֆարյանը, ավագ գիտաշխատողներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա.Հ. Խաչատրյանը, իրավաբանական գիտությունների թեկնածու Ա. Աբրահամյանը, իրավաբանական գիտությունների թեկնածու Ա.Վ. Շուքուրյանը, իրավաբանական գիտությունների թեկնածու Բ. Ղազինյանը:

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
Իրավունքի ինստիտուտի պետաիրավական

հետազոտությունների բաժնի վարիչ, իրավաբանական

Գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ.Մ. Ստեփանյան